

կենդանի ոգիով ու ամաղութիւններով, որ կ'ապրին մեր ժողովրդի սրտի խորքին մէջ, եւ այն բարոյական մեծ դրամագլխով, որ ձեռք է բերուած անհուն զոհերով, — զրկանքներով ու սերունդներու անձնուէր, գաղափարական ճիգերով:

Հ. Յ. Դաշնակցութիւնը հզօր է իր, եթէ կարելի է այսպէս ըսել, չգրուած ծրագրով, որ կը բխի աշխարհի չորս կողմը ցրուած, հալածուած ու անիրաւուած անտուն ու անտէր հայ ժողովրդի հոգիի խորքերէն: Այդ չգրուած ծրագիրն է ազգային միութեան, ինքնապաշտպանութեան եւ քաղաքական ազատութեան ու անկախութեան անյաղքելի տենչը, որ ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ աւելի կարող է իրականանալ մարտական միջոցներով ու կազմակերպութեամբ:

Թող Վրայ, խօսքի մէջ, սկզբունքներու եւ աշխարհահայեցողութեանց տեսական վէճերուն մէջ Հ. Յ. Դաշնակցութիւնը ունեցած է յաճախ վրիպումներ, գործած է սխալներ, շեղած է դիտութեան եւ իրականութեան ողջմիտ թելադրութիւններէն, բայց երբեք Հ. Յ. Դաշնակցութիւնը գործով դաւաճանած չէ հայ ժողովրդին, երբեք կորսնցուցած չէ իր կենդանի, անքակտելի կապը անոր հետ, երբեք մոռցած չէ իր պատմական առաքելութիւնը, իր իսկական դերը, երբեք շեղած չէ իր սրբազան նպատակներէն, որոնք եղած են միշտ, են ու պիտի լինին — հայ ժողովրդի միացումը, ինքնապաշտպանութիւնը եւ ազատութիւնը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը եղած է եւ է այսօր ալ գերազանցապէս ժողովրդական ու ազգային հայ կազմակերպութիւն՝ հայութեան անձնուէր զաւակներու արիւնով շաղախուած, հայութեան լաւագոյն առաջնորդներու մտքով բեղմնաւորուած — միշտ հարազատ, միշտ կենդանի, միշտ առաջապահ բովանդակ հայութեան սիրտը փոթորկող քաղաքական պայքարներու մէջ:

Հոս է Հ. Յ. Դաշնակցութեան ուժը, հոս է անոր՝ մեր պատմութեան մէջ անօրինակ յաջողութեան ու ծաւալման գաղտնիքը:

V

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՔԸ

Ի՞նչն է որ կը դրուէ դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը, կը հաւաքէ մեր դրօշակի շուրջը, զրկանքի ու զոհաբերութեան ընդունակ կը դարձնէ, կը խանդավառէ ու պայքարի կը մղէ հայութեան ամենէն կենսունակ տարրերը աշխարհի ամէն կողմ — Հայաստանէն սկսած մինչեւ Ամերիկա:

Ի՞նչն է, որ, հակառակ մեր բոլոր խաբխափումներուն, ձախորդութիւններուն, սըխալներուն, Հ. Յ. Դաշնակցութիւնը դարձուցած է եւ կը դարձնէ գործօն քաղաքական ուժ մը թէ երկրի եւ թէ գաղութներու մէջ:

Արդեօ՞ք ընկերվարական գաղափարները, նշանաբանները, ծրագիրները: Արդեօ՞ք միջազգային կամ համաշխարհային յեղափոխութեան երազները: Արդեօ՞ք բանուորական շահերու պաշտպանութիւնը կամ դասակարգային անհաշտ պայքարը ընդդէմ պուրժուազիայի...:

Հարկաւ ասոնցմէ ե՛ւ ոչ մէկը: Որովհետեւ այդ բոլորի համար բնաւ պէտք ալ չէ յարիլ հայկական անձուկ շքանակի մը մէջ ամփոփուած քաղաքական կազմակերպութեան մը, որ ընկերվարական նպատակներ հետապնդելու եւ աշխատաւորական շահեր պաշտպանելու համար ամենէն աննպաստ պայմաններու մէջ կը դռնուի: Որովհետեւ հայ բանուորը կամ հայ մտաւորականը, որ կ'ուզէ սոցիալիստական շարժման նուիրուիլ, կամ կ'ուզէ իր դասակարգային շահերը պաշտպանել օտար երկիրներու մէջ, միշտ ունի իր առջեւ գործունէութեան անհամեմատ աւելի ընդարձակ առարկէզ մը յանձին օտար ընկերվարական մեծ կազմակերպութեանց: Փոխանակ առանձնանալու, կզգիանալու եւ սպաւինելու միայն իրենց սահմանափակ ու շատ համեստ ուժերուն, գաղութներու մէջ ցրուած հայ աշխատաւորները, եթէ առաջնորդուած լինէին միմիայն իրենց դասակարգային շահերով եւ միջազգային ընկերվարական գաղափարներով, անտարակոյս պիտի միանային իրենց կողքին ապրող օտարազգի բանուորներուն եւ անոնց հետ մէկտեղ պայքարէին թէ՛ իրենց անձնական, թէ՛ իրենց դասակարգային եւ թէ՛ համամարդկային բարօրութեան համար: